ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«___»___10___2018թ

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

## ԲՓ 89

***Ձեռնարկողը՝*** ***<<Վարդանյան ընտանիք>> բարեգործական հիմնադրամ***
*ք. Երևան, Մասիսի 31*

***Գործունեությունը՝*** ***Գրիգոր Լուսավորչի, Բեյրութի, Խորենացու և Իտալիայի փողոցներով պարփակված այգու բարեկարգման և արդիականացման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
*քաղաք Երևան*

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի
տնօրենի ժ/պ՝ Ռ. Ոսկանյան

Առդիր եզրակացությունը՝ 3 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 89

«17» 10 2018թ.

***<<Վարդանյան ընտանիք>> բարեգործական հիմնադրամի կողմից նախատեսվող Գրիգոր Լուսավորիչ, Բեյրութի, Խորենացու և Իտալիայի փողոցներով պարփակված այգու բարեկարգման և արդիականացման նախնական գնահատման հայտ***

| | |
|---|---|
| Պատվիրատու՝ | <<Վարդանյան ընտանիք>> բարեգործական հիմնադրամ |
| Նախագծող՝ | <<Հուն Սավ>> ՍՊԸ, Ա/Ձ Ա. Գալոյան |
| Ներկայացված նյութեր՝ | Աշխատանքային նախագիծ, Նախնական գնահատման հայտ; |
| Տեղադրման վայրը՝ | ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան |
| Գործունեության կատեգորիան | /Գ/ կատեգորիա |

Համաձայն ներկայացված աշխատանքային նախագծի <<Վարդանյան ընտանիք>> բարեգործական հիմնադրամը «Երևան - 2800»-ին ընդառաջ նախատեսում է իրականացնել Գրիգոր Լուսավորիչ, Բեյրութի, Խորենացու և Իտալիայի փողոցներով պարփակված այգու բարեկարգման և արդիականացման աշխատանքներ:

Այգու ընդհանուր տարածքը կազմում է 15600մ/ք, որի բարեկարգման աշխատանքների տևողությունը ըստ ՇԿՆ-ի հաշվարկի կազմում է 8 ամիս, այդ թվում 1 ամիս նախապատրաստական փուլ:

Նախագծում ներառված է տարածքի ուղղաձիգ հատակագծումը, բարեկարգումը, ինչպես նաև կանաչապատումը, այդ թվում նստարանների, աղբամանների, լուսասյուների և նոր բրոնզածույլ արձանների տեղադրումը:

Բարեկարգվող այգու տարածքի ընդհանուր մակերեսը, Ա. Մյասնիկյանի արձանի հետ միասին կազմում է մոտ 15600 մ², որից.

- կանաչապատվող տարածքներ – 7500 մ²;
- գրանիտե գորգի նախշով երեսապատված տարածքներ - 5500 մ²;
- շատրվանային տարածքներ – 1200 մ²:

Նախապատրաստական փուլում կատարվում են հետևյալ աշխատանքները՝

- շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում,
- ժամանակավոր էլեկտրոմատակարարում և ջրամատակարարում,
- շինարարական նյութերի բետոնի ընդունման հարթակների պատրաստում,

- շինարարական հրապարակի լուսավորվածություն:

Հիմնական փուլի աշխատանքները, ըստ տեխնոլոգիական հաջորդականության բաժանվում են փուլերի՝

- այգու ներտարածքային քանդման շինարարական աշխատանքները, այդ թվում շատրվանների փոսորակների հողային աշխատանքներ,

- հեղեղային կոյուղու անցկացման շինարարական աշխատանքները Իտալիայի փողոցով, որի համար նախատեսված է նշված փողոցից 3.4մ շին. հրապարակի ընդլայնում, (ըստ նախագծային առաջադրանքի պահանջի), (6-7 շաբաթ),

- մալուխների տեղափոխում՝ դուրս բերում այգու տարածքից, որի համար շինարարական հրապարակը ընդլայնվում է 4մ հատվածով Խորենացու փողոցից (Իտալիայի և Բեյրութ փողոցների միջակայքով),

- հեղհեղային կոյուղու անցկացման շինարարական աշխատանքները Բեյրութ փողոցով, որի համար նախատեսված է նշված փողոցից 3.4 մ շինարարական հրապարակի ընդլայնում (ըստ նախագծի և տեխնիկական առաջադրանքի պահանջի);

- այգու բարեկարգման աշխատանքները՝ շատրվանների սարքավորումներ, սալիկապատում, եզրաքարերի տեղադրում, էլեկտրալուսավորություն և կանաչապատում:

Բնահողը տեղափոխվում է ավտոինքնաթափերի միջոցով 13-15կմ հեռավորության վրա: Անմիջապես հիմքերի տակ բնահողը մշակվում է ձեռքով, ձեռքի պարզագույն գործիքներով՝ փոքր մեխանիզմներով: Հետլիցքի համար պահանջվող բնահողը բերվում է 13-15 կմ հեռավորությունից:

Շատրվանների տակ միաձույլ երկաթբետոնե աշխատանքների համար ապրանքային բետոնը շին հրապարակ է բերվում բետոնատար ինքնաթափերի միջոցով ավտոմատ բետոնա-շաղախային հանգույցից:

Ամրանային իրերը պատրաստվում են հատուկ պոլիգոններում, մասամբ շինարարական հրապարակում:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի մշակման պահին արդեն իսկ իրականացվել են հիմնական քանդման, հողային, բետոնային և ծառահատման աշխատանքները:

Նախատեսվող շինարարական աշխատանքների փուլում մթնոլորտի վրա ազդեցությունը կապված է հողային աշխատանքների և շինարարական տեխնիկայի աշխատանքի ընթացքում առաջացող արտանետումներով: Շինարարական աշխատանքները կրում են ժամանակավոր բնույթ և չունեն զգալի ազդեցություն: Նախատեսվող շինարարական աշխատանքների փուլում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցությունների բացառման, նվազեցման նպատակով նախատեսված են մի շարք միջոցառումներ:

Օդային ավազանի աղտոտումը նվազեցնելու նպատակով նախատեսված են հետևյալ միջոցառումները,

- շինարարական հրապարակների ցանկապատում՝ անթափանց թաղանթով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերի լվացում,
- շինանյութերի, ավելցուկ գրունտի և շինարարական աղբի տեղափոխում՝ ծածկված մեքենաներով,
- շինհրապարակի պարբերաբար ջրում,
- սորուն նյութերի (ավազ, ցեմենտ) պահեստավորում փակ տարածքներում կամ թաղանթներով ծածկում:

Նախնական գնահատման հայտում նախատեսված են հետևյալ միջոցառումները.

- շինարարական տեխնիկայի տեղաշարժը և աշխատանքը իրականացնելու է միայն գոյություն ունեցող ճանապարհներով, բացառելով կանաչ գոտիների վնասումը, նոր տարածքների խախտումը և աղտոտումը;

- բացառվելու է շինարարական աղբի և հողերի կուտակումները բուսածածկ տարածքներում;
- պարբերաբար իրականացվելու է տեխնիկայի շարժիչների կարգաբերում;
- չոր եղանակներին իրականացվելու է խճի, պահեստավորված և տեղափոխվող հողային զանգվածների խոնավացում՝ ջրցանման միջոցով:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ աշխատանքները իրականացվելու են ջրային ռեսուրսներից բավականին հեռավորության վրա, կարելի է եզրակացնել, որ թե շինարարության, և թե շահագործմանը ընթացքում որևէ ազդեցություն ջրային ռեսուրսների վրա չի լինի:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվում է շինարարական հարթակների ջրցանի, ինչպես նաև ինժեներատեխնիկական անձնակազմի, բանվորների և վարորդների կոմունալ կենցաղային կարիքների ապահովման համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում, շինարարական աղբն է (ծածկագիր 9120060001000): Այն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը բարեկարգել և իրականացնել կանաչապատման աշխատանքներ:

Այգում նախատեսվող ծառերի վերջնական քանակը 356 հատ, այդ թվում նոր տնկվող կանադական կարմիր թխկի 20 հատ, մագնոլիա 30 հատ, արոսենի 25 հատ, սաֆորա 24 հատ, լացող ուռենի 20 հատ, ուռենի արծաթասյլ 20 հատ, կակաչածառ 20 հատ, թխենի 25 հատ, կատալպա 25 հատ, ցերցիս 12 հատ և 135 հատ պահպանված ծառեր:

**<u>Եզրահանգում</u>՝** Նախատեսվող գործունեության հիմնական ազդեցությունը պայմանավորված է շինարարության փուլով, որի ընթացքում ազդեցությունները թույլատրելի նորմերի սահմաններում են և կրում են ժամանակավոր բնույթ: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի վերաբերյալ կազմակերպվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում մասնակիցները և ազդակիր համայնքը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Վարդանյան ընտանիք>> բարեգործական հիմնադրամի կողմից նախատեսվող Երևան քաղաքի Գրիգոր Լուսավորիչ, Բեյրութի, Խորենացու և Իտալիայի փողոցներով պարփակված այգու բարեկարգման և արդիականացման նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն:

Տնօրենի տեղակալ՝ Ա. Դռնոյան

Մասնագետ՝ Ա. Մինասյան